սարների Սովետը կայացրել է պատմական մեծ նշանակություն ունեցող որոշում արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին, արտասահմանյան մեր եղբայրների համար ստեղծվում է Սովետական Հայաստան գալու և իրենց կյանքը լավագույն կերպով տնօրինելու լայն հնարավորություններ։ Մենք գրկաբաց կընդունենք նրանց և կանենք ամեն ինչ, որպեսզի նրանք արագ կերպով իրենց մասնակցությունը ցուցաբերեն մեր սքանչելի Հայրենիքի երջանիկ կյանքին։

ՊՐՈՖ. Մ. ՄԿՐՅԱՆ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՄԵՆՔ ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ

Անհուն բերկրանքով ու գոհունակությամբ կարդացի ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը՝ արտասահմանյան հայերին Սովետական Հայաստան ընդունելու մասին։

Ես նույնպես այն հայերի թվին եմ պատկանում, որոնք թողել էին իրենց հայրենի հողը և թափառում էին օտար երկրներում։

1927 թվին ինձ հաջողվեց վերադառնալ մայր Հայաստան։ Այդ ժամանակ Նոր Արաբկիր ավանում կային միայն մի քանի տնակներ։ Շնորհիվ սովետական իշխանության մարդասեր ու հյուրընկալ վերաբերմունքի, Թյուրքիայից եկած հայերը բոլոր պայմաններն ու հնարավորությունները ստացան Նոր Արաբկիր ավանը կառուցելու և բարեկարգելու համար։ Շուտով աճեց ու բարգավաճեց մեր բոլորիս սիրելի Արաբկիրը։ Կառուցվեցին գործարաններ ու արտելներ, գեղեցիկ բնակարաններ, աճեցին ամեն տեսակ պտղատու ծառեր, խաղողի այգիներ և ահա այսօր Արաբկիրը անճանաչելի է դարձել։ Սովետական Հայաստանը մեզ ընդունեց հարազատ մոր նման, սիրով ու գրկաբաց, աշխատելու, սովորելու, ստեղծագործելու համար մեզ տվեցին բոլոր հնարավորությունները։ Այդ ժամանակ ես մի փոքրիկ աղջիկ էի, երբ աշխատանքի մտա Տրիկոտաժ արտելում։ Պարտիան և կառավարությունը ինձ համար սովորելու լայն հնարավորություններ ստեղծեցին։ Ես ձեռք բերեցի միջնակարգ և ապա բարձրագույն կրթություն, որից հետո վերադարձա հարազատ «Արաբկիր» արտելը և այժմ աշխատում եմ, որպես արտելի վարչության նախագահ։

Ահա թե ինչպիսի հնարավորություններ կան մեր սովետական հայրենիքում կանանց ու տղամարդկանց ընդունակությունները զարգացնելու և մեր հարազատ ժողովրդին ծառայելու համար։

Մենք անհամբեր սպասում ենք արտասահմանյան մեր տարագիր եղբայրների ու քույրերի վերադարձին։ Բարի գալուստ մեր հարազատներին։

ՄԱՐԻ ԽԵՐԻԲԵԿՅԱՆ
«Արաբկիր» արտելի վարչության նախագահ

(«Սով. Հայաստ.» № 260 1945 թ.)